

Զորբորդ հաղորդում

**Մեր հոգևոր կերակուրը, մեր հոգևոր վեմը
և Տիրոջ սեղանի բովանդակությունը**

Գրվածքների ընթերցում. Ա Կրթ 10:3-4, 16-17, 21, 11:23-26

- I. Ելից գրքի 16-րդ գլխի խոր ճշմարտությունն այն է, որ Աստված ուզում է մեր սննդակարգը փոխել՝ մեզ համար սննդակարգ դարձնելով Քրիստոսին, ով մեր հոգևոր կերակուրն է, իրական մանանան, որը Հայր Աստված ուղարկում է, որպեսզի Աստծու ընտրյալ մարդիկ ապրեն Քրիստոսվ՝ Ա Կրթ 10:3, Հվի 6:31-35, 48-51, 57-58.
- Ա. Այն Քրիստոսը, որին մենք ուսում ենք որպես մեր վերակազմող տարրի ու մատակարարման, որոնք մեզ այս տիեզերքում Աստծու բնակատեղն են դարձնում, հավիտենական հիշատակ կլինի՝ Ելց 16:16, 32:
- Բ. Ծիշտ ինչպես ոսկե սափորի մեջ եղող մանանան էր Աստծու բնակատեղի կենտրոնակետը, այնպես էլ Քրիստոսը՝ որպես մանանա, որն ուսում ենք, այսօր Աստծու կառույցի կենտրոնակետն է՝ Եքր 9:3-4, Եփս 4:16, Կղս 2:19:
- Գ. Միակ կերակուրը, որն ընդունում ենք մեր սատարման, ամրապնդման և հագեցման համար, պիտք է Քրիստոսը լինի, և Նոր Կոտակարանում միակ սպասավորությունը փոխանցում է Քրիստոսին՝ որպես Աստծու մարդկանց միակ կերակրի՝ Թվշ 11:5-6, հմմտ Գրծ 1:17, 25, Բ Կրթ 4:1, Ա Տնք 1:12, Բ Կրթ 3:6:
- Դ. Քրիստոսի՝ որպես մեր եզակի կերակրի, մեր ամենօրյա մանանայի առանձնահատկությունները դառնում են մեր առանձնահատկությունները Նրա մեծարման համար մեր նյութափոխանակական փոխակերպման միջոցով՝ Նրան մեր մշտապես վայելելուն զուգընթաց՝ Հվի 6:57, Փլա 1:20-21, հմմտ Գդու 6:17.
1. Մանանան խորհուրդ է՝ Ելց 16:15, Կղս 2:2, Եայ 9:6, Եփս 3:4, Հվի 3:8:
 2. Մանանան երկարատև հրաշք է՝ Ելց 16:4, հմմտ Սնոր 6:34:
 3. Մանանան իջնում է երկնքից՝ Ելց 16:4, Հվի 6:41:
 4. Մանանան զալիս է ցողի հետ՝ Ելց 16:13-14, Թվշ 11:9, Աղմ 133:3, Ողբ 3:22-23, Եքր 4:16, Աղմ 110:3:
 5. Մանանան զալիս է առավտյան՝ Ելց 16:21, հմմտ Երգ 1:6թ, 7:12, Հվի 5:39-40, Հոմ 6:4, 7:6:
 6. Մանանան մանր է՝ Ելց 16:14, Ղկս 2:12, Հվի 6:35, հմմտ Դտվ 9:9, 11, 13, Սնոր 13:31-32:
 7. Մանանան նորդ է՝ Ելց 16:14, Հվի 6:12:
 8. Մանանան կլոր է՝ Ելց 16:14, Հվի 8:58:
 9. Մանանան սպիտակ է՝ Ելց 16:31, Աղմ 12:6, 119:140, Բ Կրթ 11:3թ:

10. Մանանան նման է եղյամի՝ Ել 16:14, Առկ 17:27:
11. Մանանան նման է համեմի սերմի՝ Ել 16:31, Թվշ 11:7, Ղկ 8:11:
12. Մանանան պինդ է՝ Թվշ 11:8, Բ Կրթ 1:4, Եփս 6:18:
13. Մանանան տեսրով նման է քարախունկի՝ Թվշ 11:7, Հյո 4:6, 8, Եզկ 1:18:
14. Մանանայի համը նման է քարմ յուրի համի՝ Թվշ 11:8, Աղմ 92:10:
15. Մանանայի համը նման է մեղրաբլիքի համի՝ Ել 16:31, Աղմ 119:103:
16. Մանանայից կարելի է բլիքներ պատրաստել՝ Թվշ 11:8, Ա Տմբ 4:6:

II. Քրիստոս խաչվեց՝ դառնալով հոգևոր վեճ, որը հետևում է Իր մարդկանց այս հետևող վեճը հարուցանված Քրիստոսն Է՝ որպես կենդանարար Հոգին, որը միշտ եկեղեցու հետ է, որպեսզի Իր հավատացյալներին մատակարարի կյանքի ջուրը՝ Ա Կրթ 10:4, Ել 17:6, Թվշ 20:8, Հվի 19:34.

- Ա. Աստծու ժողովրդի միջավայրում անախորժությունների պատճառը կարող է լինել ջրի պակասությունը, որը կյանքի Հոգու նախատիպն է. ամեն անգամ, եթե Աստծու մարդկանց պակասում է կյանքի Հոգին, նրանք խնդիրներ են ունենում. Եթե Աստծու մարդկի Հոգու առատություն են ունենում, իրաք միշտ ու Աստծու հետ նրանց ունեցած խնդիրները լուծվում են՝ Թվշ 20:2-13, Հվի 7:37-39, Հոմ 8:2:
- Բ. Քանի որ Քրիստոսը խաչվել է, և Հոգին՝ տրվել, այլև կարիք չկա, որ Քրիստոսը նորից խաչվի, այսինքն՝ կարիք չկա վեմին նորից հարվածելու, որպեսզի կենդանի ջուրը հոսի. Աստծու տնտեսությունում Քրիստոսը պետք է միայն մեկ անգամ խաչվի՝ Եքր 7:27, 9:26-28ա:
- Գ. Խաչված Քրիստոսից կենդանի ջուրը ստանալու համար անհրաժեշտ է միայն «վերցնել զավազանն» ու «խոսել վեմի հետ»՝ Թվշ 20:8.
 1. Գավազանը վերցնել նշանակում է նույնանալ Քրիստոսի հետ Նրա մահվան մեջ և Քրիստոսի մահը կիրառել մեր հանդեպ ու մեր իրավիճակի հանդեպ:
 2. Վեմի հետ խոսել նշանակում է ուղղակիորեն Քրիստոսի՝ որպես ճեղքված վեմի հետ խոսել՝ Նրան խնդրելով մեզ տալ կյանքի Հոգուն՝ իհմնվելով այն փաստի վրա, որ Հոգին արդեն տրվել է՝ հմտ Հվի 4:10, Ղկ 11:13:
 3. Եթե մեր հանդեպ կիրառենք Քրիստոսի մահն ու հավատրով խնդրենք, որ Քրիստոսը Հոգուն մեզ տա, կստանանք կենդանի Հոգուն՝ որպես կյանքի առատ մատակարարման:
- Դ. Վեմին խոսելու փոխարեն Մովսեսը քարկացավ ժողովրդի վրա, նրանց դատապարտեց որպես ապստամբների և երկու անգամ իր զավազանվ հարվածեց վեմին՝ Թվշ 20:9-11.
 1. Մովսեսը դատապարտեց ժողովրդին՝ նրանց «ապստամբ» կոչելով, քայլ հենց Մովսեսն էր ապստամբել Աստծու խոսքի դեմ՝ խ. 24, 27:14:

2. Մովսեսը շխատաց Եհովային, որպեսզի Նրան սրբացներ Խարայելի զավակների աչքին՝ 20:12.
 - ա. Աստծուն սրբացնել նշանակում է Նրան սուրբ դարձնել, այսինքն՝ Նրան առանձնացնել բոլոր կեղծ աստվածներից. Աստծուն չպրացնել նշանակում է Նրան դարձնել սովորական:
 - բ. Բարկացած լիմելով ժողովրդի վրա, եթե Աստված բարկացած չէր՝ Մովսեսն Աստծուն Իր սուրբ բնուրյան մեջ ճիշտ չներկայացրեց, իսկ վեմին երկու անգամ հարվածելով՝ նա չպահեց Աստծու խոսքն Իր տնտեսուրյան մեջ. ուստի Մովսեսը վիրավորանք հասցրեց թե՛ Աստծու սուրբ բնուրյանը, թե՛ Նրա աստվածային տնտեսուրյանը:
 - գ. Մրա պատճառով, թեև Մովսեսն Աստծու հետ մտերիմ էր ու կարող է Աստծու ընկերը համարվել (Եց 33:11), նա կորցրեց բարի երկիրը մտնելու իրավունքը:
3. Ինչ էլ Աստծու ժողովրդի վերաբերյալ ասենք և անենք, մեր վերաբերմունքը պետք է համապատասխանի Աստծու սուրբ բնուրյանը, իսկ մեր գործողությունները պետք է Նրա աստվածային տնտեսուրյան համաձայն լինեն. այդպես մենք Աստծուն կպրացնենք. այլապես մեր ասածներով լինենք կապստամբենք Աստծու դեմ ու կվիրավորենք Նրան:

III. Քրիստոսը՝ որպես Տիրոջ սեղանի բովանդակությունը, Աստծու նորկտակարանյան տնտեսուրյան իրականությունն Է՝ Ա Կրթ 10:16-17, 21, 11:23-26.

Ա. Տիրոջ սեղանի շեշտադրումը Նրա արյան ու մարմնի հաղորդակցությունն է, մասնակցությունը Տիրոջ մեջ, փոխադարձության, հաղորդակցության մեջ Տիրոջը վայելելը՝ 10:16-17, 21.

1. Տերմ Իրեն տվեց մեզ, որպեսզի մենք հաղորդ լինենք Նրան՝ որպես մեր խնջույքի, ու վայելենք Նրան՝ ուստեղով ու խմելով Նրան. որպեսզի Քրիստոսը դառնար մեր խնջույքը՝ բարի երկրի արտադրանքի իրականությունը, Նա պետք է գործընթաց անցներ՝ հմտ Երկ Օր 8:7-10.
- ա. Եթե Քրիստոսը շմարմնանար, չեր կարողանա արյուն ու մարմն ունենալ. մարմնացման միջոցով Քրիստոսն արյունով ու մսեղիով մարդկային մարմին հագավ՝ Եքր 2:14:
- բ. Եթե Քրիստոսը չխաչվեր, Նրա արյունը չէր կարողանա Նրա մարմնից առանձնացվել. խաչելության միջոցով Նրա արյունն առանձնացավ Նրա մարմնից՝ Հվի 6:53-55:
- գ. Եթե Քրիստոսը չհարուցանվեր, չեր կարողանա սեղանին լինել որպես մեր կերակուրք. հարության մեջ Նա մեզ մատուցվում է խնջույքի սեղանին՝ որպես խնջույք մեր սնուցման ու վայելքի համար. Նա, ով մեզ է ներկայացնում Իր մարմինն ու Իր արյունը, հարու-

ցանված Քրիստոսն է՝ որպես համարովանդակ կենդանաբար Հռ-
գի՛ւ Ա Կրթ 15:45թ, Բ Կրթ 3:17:

2. Տեր Հիսուսը «հացը վերցրեց, այն օրինեց, կոտրեց ու աշակերտներին
տալով՝ ասաց. Վերցրեք, կերեք. սա Իմ մարմինն է»՝ Մտք 26:26.
 - ա. Հացը կյանք է մատնանշում՝ Աստծու կյանքը, հավիտենական
կյանքը. հացը խորհրդապատկերում է Տիրոջ ֆիզիկական մարմի-
նը, որը Նա խաչի վրա մեզ համար տվեց, որպեսզի մեր մեջ կյանք
ներդնի՝ Հվի 6:35, 57, 63, Ղկու 22:19:
 - բ. Հացը նաև խորհրդապատկերում է Տիրոջ առեղծվածային Մարմի-
նը՝ այն միջոցը, որով Քրիստոսն իրականացնում է Իր երկնային
սպասավորությունը՝ աստվածային կառավարումն իրագործելու
համար՝ Եփս 1:22-23, 4:16, Հյտ 5:6:
 - գ. Մասնակցելով Տիրոջ աստվածային կյանքին, ուտելով ու վայելելով
Նրան՝ որպես կյանքի հացի՝ մենք դառնում ենք Նրա առեղծվա-
ծային Մարմինը, Նրա ընդլայնումը՝ Ա Կրթ 10:17, 12:27:
3. Տեր Հիսուսը, բաժակը վերցնելով ու գոհություն հայտնելով, այն նրանց
տվեց ու ասաց. «Ամենքդ դրանից խմեցեք, որովհետև սա ուխտի Իմ
արյունն է, որը հանուն շատերի հեղվում է մեղերի ներման համար»՝
Մտք 26:27-28.
 - ա. Բաժակն օրինություն է մատնանշում, որն Աստված Ինքն է՝ որպես
մեր բաժինը՝ Սղմ 16:5:
 - բ. Տիրոջ փրկությունը դարձել է մեր բաժինը՝ փրկության բաժակը,
հորդող բաժակը, որի բովանդակությունը Աստված է՝ որպես մեր
համարովանդակ օրինությունը՝ 116:13, 23:5:
 - գ. Քրիստոսի արյունը՝ որպես նոր ուխտի արյունը, մեզ մտցնում է նոր
ուխտի մեջ, որում Աստված մեզ տալիս է նոր սիրտ, նոր հոգի, Իր
Հոգուն, կյանքի ներքին օրենքը և Աստծուն ճանաչելու, Աստծուն
տիրելու, Աստծուն քոյլ տալու, որ մեզ տիրի, ինչպես նաև մեր բո-
լոր անօրենությունների ներվելու ու մոռավելու օրինությունը ստա-
նալու կյանքի ընդունակությունը՝ Եզկ 36:26-27, Ղկու 22:20, Երբ
8:10-12, Սղմ 103:1-3, 12:
 - դ. Ուխտի արյունը մեզ մտցնում է Աստծու ներկայության մեջ Սրբութ-
յունների Սրբությունում, որտեղ մենք հայում ենք Նրա գեղեցկութ-
յանը, Աստծու ներարկման ու փոխներարկման մեջ և Աստծու
հավիտենական վայելքի մեջ. Աստծուն այսկերպ վայելելն է առա-
ջացնում Աստծու մարդուն՝ 27:4, Ելց 24:8, հմմտ Ղոց 16:11-16:
 - ե. Ի վերջո ուխտի՝ հավիտենական ուխտի արյունը Աստծու մարդ-
կանց բերում է Աստծու՝ որպես կյանքի ծառի և կյանքի ջրի լիակա-

տար վայելքի մեջ և՝ այժմ, և՝ հավիտյան՝ Երբ 13:20, Հյտ 7:14, 17,
22:1-2, 14, 17:

- Բ. «Քանի որ ամեն անգամ, երբ այս հացն ուտում եք և բաժակը խմում, Տիրոջ
մահն եք ազդարարում, մինչև որ Նա զա»՝ Ա Կրթ 11:26, հմմտ Հոմ 5:10.
1. «Տիրոջ մահն ազդարարել» նշանակում է հոչակել, ցուցադրել Տիրոջ
մահը. Նրա կյանք ազատազրող մահն ազդարարել նշանակում է ազ-
դարարել Նրա առաջին զալուստը Նրա իրավական փրկագնման հա-
մար, որի նպատակը եկեղեցին առաջացնելն էր՝ Հվի 12:24, 19:34:
 2. «Մինչև որ»-ը ենթադրում է, որ եկեղեցին կամքում է Տիրոջ առաջին ու
երկրորդ զալուստներն այն բանի շնորհիվ, որ մենք ուտում ու խմում ենք
Քրիստոսին Նրա օրգանական փրկության գործընթացում:
 3. «Նա զա»-ն մատնանշում է Նրա երկրորդ զալուստը՝ երկրի վրա Աստ-
ծու բազավորությունը հաստատելու համար, ինչպես որ Տերն ասաց
Մտք 26:29-ում. «Այսուհետև որքի այս բերքից բնավ չեմ խմի մինչև այն
օրը, երբ դա՝ որպես նոր բերք, ձեզ հետ իմ Հոր բազավորության մեջ
խմեմ»:
 4. Այսպիսով՝ մինչև Տիրոջ գալը Նրա մահն ազդարարել նշանակում է ազ-
դարարել եկեղեցու գոյությունը՝ բազավորությունը բերելու համար.
Տիրոջ ընթրիքը մեր ուտելու արդյունքը պետք է լինի Տիրոջը իշխելը Նրա
երկու զալուստների մեջ: